ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
# 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

2023

ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
# ԵՎ
# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ԹԵՍՏ 5**

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

*Սիրելի՛ աշակերտ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

*Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:*

Եղե՛ք ուշադիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի դիմաց համապատասխան համարների տակ դրե՛ք X նշաններ:

*Մաղթում ենք հաջողություն:*

**1** **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

*Եր-նավառ(1) քարերից կե-տված(2) առանձնարանը լուսավորվելով եր-ան(3) հանեց հինավուր-(4) արվեստի նր-աճաշակ(5) պերճանքը: Խոյակազար-(6) սյուները գոտ-որ(7) պատվանդանների վրա էին: Տան կամարաձև խորշերի ներսը նախշված էր հա-ճապակյա(8) աղյուսներով, իսկ դրանց ծայրերը դրվա-ված(9) էին ոսկեզ-ծ(10) եզրերով:*

1) 1-փ, 3-և, 7-եվ, 9-գ
2) 2-ր, 4-ծ, 5-բ, 9-գ
3) 2-ր, 5-բ, 8-խ, 10-օ
4) 3-և, 4-ծ, 6-դ, 10-օ

**2** **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) ինչ(որ)է, ճեփ(ճերմակ), քանի(դեռ)
2) ձեռք(բերում), ի(հեճուկս), թև(թևի)
3) կիսով(չափ), հարյուր(հինգ), բեռով(բարձով)
4) դռնից(դուռ), առ(այն), մուգ(կարմիր)

**3** **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ՆՅՈՒ ՅՈՐՔ, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ, ՄԵԾ ՄԱՍԻՍ
2) ՆԱՐԵԿԱ ՎԱՆՔ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲԵՌԼԻՆ
3) ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ, ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵԹՀՈՎԵՆ, ԵՋՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ
4) ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ԱԼՊՅԱՆ ԼԵՌՆԵՐ, ՆԵՐՍԵՍ Գ ՏԱՅԵՑԻ

**4** **Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:**

1) Ը -7
2) ՄԱԲ -212
3) Խ -40
4) ՎԹՄ -2072

**5** **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ու*-ի հնչյունափոխություն կա:**

1) սրբիչ, նշաձող, շրջադարձ
2) խնկաբույր, կամրջակապ, մտավոր
3) մրցանակ, լողություն, շքամուտք
4) մկնիկ, մանկամարդ, բքախեղդ

**6** **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) բուրյան-հոտավետ, թախծահար-վշտահար, մակույկ-նավակ
2) բամբասանք-ասեկոսե, ծավալել-ընդարձակել, աղամանդ-շողակն
3) հափշտակել-կողոպտել, վիհ-անդունդ, քողարկել-պարտակել
4) նենգ-խոժոռ, բարբարոս-վայրենի, շեղջ-դեզ

**7** **Ո՞ր տարբերակում են տրված բառերը և նրանց հականիշները նշող տառերն ու թվերը ճիշտ համապատասխանեցված:**

| | |
|---|---|
| ա. ճապաղ | 1. քնքուշ |
| բ. վտիտ | 2. սեղմ |
| գ. շինծու | 3. մարմնեղ |
| դ. բիրտ | 4. բնական |

1) ա-2, բ-1, գ-3, դ-4
2) ա-4, բ-1, գ-2, դ-3
3) ա-2, բ-3, գ-4, դ-1
4) ա-4, բ-1, գ-3, դ-2

**8** **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) ***ակնակապիճ*** – աչքի փոսիկ, ***աղամորդի*** – մարդ արարած
2) ***երախտիք*** – ուրիշին արված բարի գործ, ***բամբիշ*** – լուր բերող
3) ***ծանծաղ*** – փոքր խորություն ունեցող, ***սրվակ*** – ապակյա փոքրիկ անոթ
4) ***բախտակ*** – ձկան տեսակ, ***զրգամոլ*** – փափուկ կյանք սիրող

**9** **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) հրաժեշտ, խարիսխ, կորիզ
2) դշխո, ներբան, ներկա
3) երաժիշտ, համբավ, համարձակ
4) տկար, բժիշկ, սաղավարտ

**10** **Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է միավանկ:**

1) շահամոլ, ալեկոծ, բծախնդիր
2) վերնաշապիկ, վաղանցիկ, տեղատվություն
3) անմեղսակից, ինքնուսույց, փոշեկուլ
4) ձեռնամարտ, կենսաժպիտ, սահադաշտ

**11** **Ո՞ր շարքում գոյական կա:**

1) արևաշող, ամենուրեք, առաթուր
2) ալեծածան, նկարագիր, մեծահամբավ
3) ժամանակավոր, երկարատև, շիկահեր
4) քինախնդիր, արծաթափայլ, կամարակապ

**12** **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

1) թռչնաբույծ, գիսաստղ, կողաթև, միջնապատ
2) բնագիր, անվաղող, պահանջատեր, ուղեցույց
3) ցուցափայտ, երկրամաս, գետաձի, սեպագիր
4) ջրատար, կցակար, զորգեզր, սալաքար

**13** **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:**

1) ամառ, կեսօր, անձնանուն
2) երեկ, գարուն, ցերեկ
3) շաբաթ, վաղը, այսօր
4) կեսգիշեր, իրիկնաժամ, երբ

**14** **Ո՞ր տարբերակում հարկադրական եղանակի բայաձև կա:**

1) Աշխարհին, այո՛, մաքրություն է պետք:
2) Եվ հայելուց… պիտի կոշիկ կարել, Որ ոտնատակն անգամ հողը արտացոլի:
3) Մարդկանց մոտ պետք է աչալուրջ լինես, միշտ ոտքի վրա և սուրը ձեռքիդ:
4) Իսկ սեփական անձի արտացոլման համար Ձեզ հայելի պե՞տք է:

**15** **Ո՞ր շարքում հաստատական վերաբերական *չկա:***

1) արդյոք, կարծես, հարկավ
2) գոնե, գուցե, անշուշտ
3) մի՞թե, իբր թե, իրոք որ
4) թերևս, երևի, միայն

**16** **Ո՞րը բարդ ստորադասական նախադասություն *չէ* (նախադասությունները կետադրված չեն):**

1) Պատահում էր օրերով չէր երևում:
2) Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները խոնավություն կաթեց քարերի վրա:
3) Ինչ որ ես չեմ ասել նա կասի վաղը:
4) Մենք էլ նստում էինք այնքան մինչև քունը հաղթեր գլուխներս հենեինք քուրսու թախտին:

**17** **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Երբ գրկում էի նրան՝ այդ նազելի էակին, և նայում լեռնային աղբյուրների նման նրա վճիտ աչուկների մեջ, տեսնում էի, որ այնտեղ մի թախծալի, երազուն կարոտ կա:*




**18** **Ո՞ր բարդ նախադասության մեջ ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կա:**

1) Մինչև վերջին րոպեն միամիտ ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է:
2) Այդպես էլ չիմացվեց, թե ինչ եղավ Եգոր Աղամովը:
3) Եվ Սիմոնին թվաց, թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը:
4) Ես տեսա, թե ինչպես պապս շտապեց դեպի սանդուղքը:

**19** **Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և այն մեծահասակներին, որոնք սիրում են մանկական գրքեր կարդալ:*

1) Գիրքը հասցեագրված է մանկական գրքեր կարդալ սիրող բոլոր երեխաներին և մեծահասակներին:
2) Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և մեծահասակներին՝ մանկական գրքեր կարդալ սիրողներին:
3) Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և մանկական գրքեր կարդալ սիրող մեծահասակներին:
4) Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և մանկական գրքեր կարդալ սիրող այն մեծահասակներին:

**20** **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Վերջում դուրս էին հանում այդ գործի հետ որևէ առնչություն չունեցողներին:
2) Լառ-Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու աչքերին արցունքներ երևացին:
3) Այդ արևազօծ օրերին սահմռկեցնող էր ալիքների շառաչյունը՝ խոյընթաց և մրրկահույզ:
4) Դեպի երկի՜նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի:

**21** **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Տուն գնալիս բրուտ Ավագը մի քանի քար է դարսում իրար վրա, վերևն էլ դնում ցաքի փուշ, որպեսզի, ինչպես ինքն է ասում, «քամին խաղա» և չորացնի ամանները:
2. Առաջին մասում «չարխն» է, ջրի կուժը և կավե ցեխը. երկրորդ մասում բերանի վրա շարված են դեռ չբոծած կժեր, կուլաներ, գավաթներ և դարակներ:
3. Բրուտի քարանձավը երկու մասից է. առաջինն ավելի ցածր է, երկրորդը՝ բեմի չափ բարձր:
4. Քարանձավը դուռ չունի, այդ պատճառով էլ բրուտները ուրիշ կերպ են մուտքը փակում:

1) 4, 3, 1, 2
2) 4, 1, 3, 2
3) 3, 2, 4, 1
4) 3, 4, 2, 1

**22** **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ** *չկա:*

1) Մենք վազում ու վազում էինք, բայց արդեն թվում էր՝ այդ վազքը եղել է վաղուց, և հիմա սկսվել է երազը:
2) Կարմիր պառավ ձին աչքերը չէր թարթում. եթե թարթեր, գայլը տեղից տեղ կցատկեր, և ինքը չէր հասցնի նկատել, ինչպես թշնամին մոտեցավ քուռակին:
3) Օրուգիշեր ճանապարհ կտրելով՝ անապատների տատասկներից գզգզված՝ հասավ նա մի օր քաղաքի պարիսպներին:
4) Դրսում վառեցին խարույկները՝ ցլերին ողջակիզելու, սակայն, մրրկաշունչ հողմ բարձրացավ, և բոցերը հանգան:

**23** **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

*Ծաղկի պես կարմիր, հրասիրտ, զվարթ*
*Բացվել է այսօր սիրտս նաիրյան*
*Աշխարհի սրտում,*
*Թեժ, կարմիր սրտում վառվող աշխարհի:*

1) մակդիր
2) բաղաձայնույթ
3) շրջադասություն
4) համեմատություն

**24** **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Ոլորանից հետո, ………………………., գետը զգալիորեն լայնանում էր:*

1) մենք վեր էինք բարձրանում
2) որ բավականին սուր անկյուն էր կազմում
3) մշտադալար փշատերև ծառերի խիտ կամարի տակով
4) գետի ափերը հրաշագեղ էին

**25** **Ո՞ր պնդումն է ճիշտ Ակսել Բակունցի ստեղծագործությունների վերաբերյալ:**

1) «Ալպիական մանուշակ» պատմվածքում մինչ հնձվորի՝ տուն վերադառնալը երեք ձիավորները արդեն հեռացել էին վրանից:
2) «Միրհավ» պատմվածքը երիտասարդ Դիլան դայու սիրո պատմությունն է, որն ավարտվում է Սոնայի հետ ամուսնությամբ:
3) Սպիտակ ձիու փոխարեն Կոստանդ աղան ներկայացել էր լղար, մեջքը փոս ընկած, մոխրագույն ձիով, որը անպիտան գտնվեց, և Կոստանդ աղան նրանով վերադարձավ գյուղ:
4) Հնագետն ու նկարիչը աշխարհը նույն կերպ էին ընկալում, և նրանց հայացքները միմյանցից չէին տարբերվում:

**26** **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված վիպական այն հերոսների անունները, որոնք հայրական անեծքով դառնում են անմահ:**

1) Արտավազդ, Փոքր Միեր
2) Արա Գեղեցիկ, Դավիթ
3) Բաղդասար, Մեծ Միեր
4) Արտաշես, Սանասար

**27** **Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

*Ամեն մարդ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է.*
*Ամեն մարդ չի կանա կարդա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է:*

1) «Աշխարս մե փանջարա է»
2) «Դուն էն գըլխեն իմաստուն իս»
3) «Թամամ աշխար պտուտ եկա»
4) «Աշխարումս ախ չիմ քաշի»

**28** **Ա. Շիրվանզադեի «Քաոս» վեպի ո՞ր հերոսի մասին է:**

*«Նրա հոյակապ տները, որ հպարտ ճակատներով կանգնած էին քաղաքի կենտրոնական փողոցներում, մի-մի փուշ էին դարձել քաղաքացիների աչքում, նրա բազմաթիվ հողերից բխող նավթը խեղդում էր, և գործարանների ծուխը՝ կուրացնում նրանց աչքերը»:*

1) Միքայելի
2) Մարկոս աղայի
3) Սմբատի
4) Մարութխանյանի

**29** **Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի երկտողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ երկտողերի հաջորդականությունը:**

1. Մենք ամենքըս հյուր ենք կյանքում
   Մեր ծնընդյան փուչ օրից
2. Մահը մերն է, մենք՝ մահինը,
   Մարդու գործն է միշտ անմահ
3. Անց են կենում սեր ու խընդում,
   Գեղեցկություն, գանձ ու գահ
4. Հերթով գալիս, անց ենք կենում
   Էս անցավոր աշխարհից

1) 1, 3, 2, 4
2) 1, 4, 3, 2
3) 4, 1, 2, 3
4) 2, 4, 1, 3

**30** **Ո՞ր բառն է բաց թողած:**

*- Աշխարհն էլ, ասես, մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ, հրաշք..................:*

1) իրական
2) դյութական
3) մոգական
4) ցնորական

**31** **Գ. Զոհրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:**

*«...Եթե գիտնայիր, որ մեկ խոսքովդ սիրտս կը բանամ աս դանակով. իմ սերս ամուր է սա երկաթին պես, քույրդ... ծառի մը ոստին պես ամեն դի կծռի...»:*

1) «Զաբուղոն»
2) «Ճիտին պարտքը»
3) «Այինկա»
4) «Փոստա՛լ»

**32** **Ո՞ր ստեղծագործության հեղինակը Ե. Չարենցը *չէ:***

1) «Դանթեական առասպել»
2) «Մահվան տեսիլ»
3) «Գանգրահեր տղան»
4) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»

33 **Ո՞ր բառերի տառերի և հնչյունների քանակներն են անհավասար:**

1. անորոշ, 2. արջառոս, 3. ովքեր, 4. կտակարան, 5. ակնբախ, 6. անընկեր,
7. բարձրանալ, 8. ինքնաեռ

34 **Ո՞ր բառերում *-ագին* վերջածանց կա:**

1. ցնծագին, 2. սրտագին, 3. գլխագին, 4. ցավագին, 5. փրկագին, 6. կարոտագին,
7. սակագին, 8. ապրանքագին

35 **Ո՞ր նախադասություններում դերանուն կա:**

1. Ձյունը դեռ չէր հալվել, բայց արևի ջերմությունից արդեն զգացվում էր, որ գարունը բոլորովին էլ հեռու չէ:
2. Մի քանի տեղ աղվեսը ուժասպառ ընկել էր, արյունն ավելի շատ էր հոսել, և ձյունի վրա թափվել էին մորթու մազերը:
3. Կրակոցից ծառի ճյուղերից ձյուն թափվեց, բայց վառոդը չխանձեց ոչ մի աղվեսի մորթի:
4. Անտառը կրակեց. մխի մեջ տեսա, թե ինչպես աղվեսը գլորվեց:
5. Արևը մայր մտնելու մոտ էր, ծովակի կողմից փչում էր զով քամի, իսկ եղանները բարձրանում ու համաչափ իջնում էին:

36 **Ո՞ր նախադասություններում բայական անդամի լրացում *չկա:***

1. Ժամանակները խառն են ու խրթին. հողմը ննջում է, հովը՝ ըմբոստանում:
2. Գետի վշշոցը ներքևում դառնում է շառաչ:
3. Հավքերն աղոթք են անում քնելուց առաջ:
4. Որտե՞ղ են ննջում իմ վաղնջական առավոտները:
5. Եվ լույսը բացվեց, քարը պար եկավ:

37 **Նախադասությունից դուրս գրված բառերից որո՞նց ձևաբանական վերլուծությունն է սխալ:**

*Խոսքերդ կարկաչող որպես նուրբ մի զգեստ Ստվերում են սրտիդ գաղտնիքները սիրուն:*

1. **կարկաչող** - ենթակայական դերբայ
2. **նուրբ** -ածական, դրական աստիճան
3. **մի** - անորոշ դերանուն
4. **սրտիդ** - դիմորոշ հոդ
5. **որպես** – ստորադասական շաղկապ

38 **Ո՞ր թվերի տեղում ստորակետ պիտի դրվի:**

Դվինի վրա իջել էր գարնան մի մութ երեկո(1) և երեկոյի հետ սկսվել էր մի մոլեգին քամի որը(2) դիվական պտույտներ գործելով(3) քաղաքի փողոցներում ու հրապարակներում վնգում էր(4) կամ սուլում չարախինդ: Այդ ժամանակ թվում էր(5) թե ամեն ինչ վերջացավ և քաղաքում կտիրի սովորական անդորրը(6) բայց մի քանի վայրկյան հետո(7) գազազած քամին նորից էր սկսում իր պտույտները(8) և քաղաքը նորից լցնում աղմուկով:

**39** **Բառերից քանիսո՞ւմ ձայնավորի սղում կա:**

մշտարթուն, երեսնամյա, աստղագետ, սնանկ, կաղնուտ, ամրակ, գետնանուշ, չվացուցակ

**40** **Դարձվածքներից քանի՞սն են ճիշտ բացատրված:**

- ***ջրի երես հանել*** – բացահայտել
- ***աչքը ջուր կտրել*** – կարոտով, անհամբերությամբ սպասել
- ***առաջին ձեռքից*** – առաջին պատահած մարդուց
- ***երեսի վրա թողնել*** – ուշադրության կենտրոնում պահել
- ***մտքի թելը կտրվել*** – մտադրությունից հետ կանգնել

**41** **Նախադասություններից քանիսո՞ւմ մակբայ կա:**

- Ես ծնվել եմ դժոխքի միջով անցնող երկար ճամփորդության ծայրին, այնտեղ, ուր միանգամից սկսվում է դրախտը:
- Հրամանատարն ասաց, որ առաջ ինքն ուշադիր էր զինվորների նկատմամբ, բայց ժամանակները այլ են, ու տարիքն իրենն անում է:
- Ողջ ընտանիքի հոգսը ծանրացել է ինձ վրա, ու շնչելու ժամանակ չունեմ:
- Դիլան դային էլ կին առավ, բայց հիշողության ծալքերում հավիտյան մնաց Սոնան:

**42** **Տարբերակներից քանիսո՞ւմ շարահյուսական վերլուծության սխալ կա:**

*Իշխանը անմիջապես ճանաչեց նրան, որովհետև ճրագը նա էր բռնել:*

- **իշխանը** – ենթակա
- **որովհետև** – պատճառի պարագա
- **նրան** – հանգման անուղղակի խնդիր
- **ճրագը** – ուղիղ խնդիր
- **բռնել էր** – բաղադրյալ ստորոգյալ

**43** **Նախադասություններից քանիսո՞ւմ պատճառի պարագա կա:**

- Մի հավք ծկլթաց ծառի սաղարթում, Վախից վայր ընկավ ծաղիկը ձեռքից:
- Ինչո՞ւ են քարերը մոռացել քայլելը, Երևի տարիքը արածը արել է:
- Բանաստեղծությո՛ւն, դու պիտի փրկվես Աննճարակության համաճարակից:
- Էսպես տիկինը տվեց պատասխան. Անհուն ցասումից մռնչաց Շահը:

**44** **Նախադասություններից քանի՞սն են արևմտահայերենով**:

- Ինչո՞ւ արդյոք խորշակահար Կ'ըլլե ծաղկունք դեռափթիթ:
- Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթենկան:
- Դեղի՛ն վարդեր մայիսի, բուրումներով խնկավետ թալկության մը մեջ հավետ կը տժգունին մեկուսի:
- Կելնեմ, կու գնամ, մանկտի՛ք, հաւասար բարով մնացէ՛ք:

**45** **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Հատկացուցչի ու հատկացյալի միջև կարող են ընկնել այլ բառեր:
2. Անձնական դերանվան առաջին և երկրորդ դեմքերով արտահայտված հատկացուցիչը կարող է փոխարինվել ***ս, դ*** հոդերով:
3. Բուն բացահայտիչը կարող է ունենալ որոշիչ, հատկացուցիչ լրացումներ:
4. ***Ո՞րքա՞ն, ինչքա՞ն*** հարցին պատասխանող լրացումները դառնում են միայն որոշիչներ:
5. Շրջուն շարադասության դեպքում հատկացուցիչը դրվում է հատկացյալից առաջ:
6. Բուն բացահայտիչը չի կարող դրվել ներգոյական հոլովով:

Պետական ավարտական քննություն 2022-2023 թթ. ուստարի

*Պատասխանների ձևաթուղթ*

*Հայոց լեզու և Հայ գրականություն*

## Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի համարը

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 1 |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 2 |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 3 |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 4 |

Պատասխանի համարը

| | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 1 |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 2 |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 3 |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 4 |

### Կարճ պատասխանով առաջադրանքներ

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 33 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 34 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 35 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

### Կարճ պատասխանով առաջադրանքներ

Կարճ պատասխան

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 36 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 37 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 38 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

| | | | |
|---|---|---|---|
| 39 | ☐ | 42 | ☐ |
| 40 | ☐ | 43 | ☐ |
| 41 | ☐ | 44 | ☐ |

### Պնդումների փունջ

Պնդումների փունջ

| 45 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| Ճիշտ է | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| Սխալ է | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| Չգիտեմ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

## Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի պատասխաններ

| | ☐☐ | ☐☐ |
|---|---|---|
| 1 | ☐ | ☐ |
| 2 | ☐ | ☐ |
| 3 | ☐ | ☐ |
| 4 | ☐ | ☐ |

Կարճ պատասխաններ

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ☐☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

Պնդումների փունջ

45. ☐

| | |
|---|---|
| Ճիշտ է | ☐ |
| Սխալ է | ☐ |
| Չգիտեմ | ☐ |

☐ Փոխված պատասխանների քանակը

*Արտագրե՛ք այս նախադասությունը՝*

*Ծանոթ եմ քննության կարգին:*

.................................................................................................

Հանձնաժողովի անդամներ՝

1. .................................................................

2. .................................................................

Հանձնաժողովի նախագահ՝

.................................................................

| Միավորների գումարը | |
|---|---|
| Գնահատականը | |